ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 13-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **04.04.2023թ-ի «Արարատ 2»-«Միկա» (ԱԽ 134) գնդակ վերադարձնող երեխաների մարզչի՝ նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. **04.04.2023թ-ի «Շիրակ 2»-«Ալաշկերտ 2» (ԱԽ 138) 1) խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից ֆուտբոլիստի հասցեին վիրավորական արտահայտություններ անելը, կարգ ու կանոն չապահովելը 2) «Ալաշկերտ 2» թիմի կողմից նախապես մարզահագուստի գույները չճշտելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ 2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ալաշկերտ 2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 73-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **05.04.2023թ-ի «Շիրակ»-«Փյունիկ» (ԳԽ-011) 1)խաղավարտից հետո մեծ թվով երկրպագուների խաղադաշտ ներխուժելը, 2) 11 մետրանոց հարվածաշարի մեկնարկում դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից լազերների օգտագործումը, 3) հյուր թիմի երկրպագուների կողմից ճայթրուկների օգտագործումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 29-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթանասունհինգապատիկի՝ 75,000 ՀՀ դրամի չափով:
   Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունհինգապատիկի՝ 45,000 ՀՀ դրամի չափով:

4. **06.04.2023թ-ի «Ուրարտու»-«Գանձասար» (ԳԽ-012) 1) խաղավարտին բազմաթիվ երկրպագուների խաղադաշտ ներխուժելը, 2) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից ճայթրուկների օգտագործումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

5. **05.04.2023թ-ի «Նիգ-Շենավան-13»-«Օշական-13» (10Մ4-005) խաղին «Օշական-13» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օշական-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Օշական հ/պետարան»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. **05.04.2023թ-ի «Հրազդան-աղջիկներ 8-2»-«Քաղսի-աղջիկներ 10» (ԿՄ10ԵՐ-003) խաղին երկու թիմերի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Հրազդան-աղջիկներ 8-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Հրազդանի 8 հիմ/դպ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:
2) Հաստատված համարել «Քաղսի-աղջիկներ 10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Քաղսիի միջ/դպ.» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

7. **06.04.2023թ-ի «Ակադեմիա-2-09»-«Արտաշատ-08» (15Բ-053) խաղին «Արտաշատ-08» թիմի ուշ ներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արտաշատ-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Արտաշատի համ.մ/դպ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. **06.04.2023թ-ի «Միկա-08»-«Ակադեմիա-1-09» (15A-051) խաղի ժամանակահատվածում «Միկա-08» թիմի ֆուտբոլիստ Ալեքս Սիմոնյանի (30778) կողմից գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա-08» թիմի ֆուտբոլիստ Ալեքս Սիմոնյանի (30778)կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Միկա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

9. **06.04.2023թ-ի «Բենտոնիտ-10»-«Շիրակ-1-10» (13U2-050) խաղի ժամանակահատվածում «Բենտոնիտ-10» թիմի մարզիչ Գրիգոր Բալասյանի (35820) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ անհամաձայնություն հայտնելը և վիրավորական արտահայտություններ թույլ տալը (հայհոյելը)**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ-10» թիմի մարզիչ Գրիգոր Բալասյանի (35820) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև սույն թվականի մայիսի 10-ը ներառյալ և «Բենտոնիտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի 30,000 ՀՀ դրամի չափով:

10. **08.04.2023թ-ի «Արարատ-2-09»-«Արփի-09» (14C1-043) խաղի ժամանակահատվածում «Արփի-09» թիմի ֆուտբոլիստ Հրաչ Գևորգյանի (35795) կողմից գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արփի-09» թիմի ֆուտբոլիստ Հրաչ Գևորգյանի (35795) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

11. **09.04.2023թ-ի «Վան-2-10»-«Փյունիկ-1-10» (13U3-077) խաղին «Փյունիկ-1-10» թիմի ուշ ներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-1-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

12. **09.04.2023թ-ի «Սպարտակ-10»-«Ակադեմիա-3-10» (13U3-080) խաղին «Սպարտակ-3-10» թիմի գլխավոր մարզչի նախախաղային հանդիպմանը ուշ ներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Սպարտակ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Աջափնյակ ՄՊԴՊ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

13. 09.04.2023թ-ի «Բերդավան-07»-«Նոա-07» (16C1-040) խաղի ժամանակահատվածում «Նոա-07» թիմի ֆուտբոլիստ Կիմ Թովմասյանի (37982) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ անհամաձայնություն հայտնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա-07» թիմի ֆուտբոլիստ Կիմ Թովմասյանի (37982) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 30-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև 1 խաղով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի մինչև եռապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

14. 10.04.2023թ-ի «Գանձասար»-«Փյունիկ-Ակադեմիա» (ԱԽ-142) խաղի ժամանակահատվածում «Փյունիկ-Ակադեմիա» թիմի գլխավոր մարզիչ Ռոման Սիմոնյանի (287) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը (հայհոյելը)

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-Ակադեմիա» թիմի գլխավոր մարզիչ Ռոման Սիմոնյանի (287) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը և 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև սույն թվականի ապրիլի 22-ը ներառյալ և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով: